Կրթության էլեկտրոնային կառավարման բաժին
Հաստատում եմ
Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների
վարչության պետ Գ. Հովհաննիսյան

_____

”___” _____ 2021 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2021

1. Բաժնի հիմնական նպատակները, խնդիրները՝ համաձայն հաստատված կարգի

№	Նպատակներ, խնդիրներ
1	Ներդնել և ծավալել նորարարական կրթական գործընթաց՝ ապահովելով բարձր որակավորում ունեցող մանկավարժական կադրերի պատրաստում՝ առցանց, էլեկտրոնային ուսուցման տեխնոլոգիաների լայնակի կիրառման հիման վրա, կիրառելով կրթական տեղեկատվական տեխնոլոգիաները համալսարանի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:
2	Մասնակցել համալսարանի կառավարման համակարգի բարելավմանը, նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը, ինչպես նաև ժամանակակից պահանջները բավարարող համալսարանական ենթակառուցվածքների ձևավորմանը:
3	Մասնակցել ՏՏ-ով հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայրի ապահովմանը՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու և դյուրակառավարելի դարձնելու նպատակով:
4	Մասնակցել համալսարանի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը կառավարման տեղեկատվական-վերլուծական միասնականացված համակարգի ստեղծման միջոցով:
5	Մասնակցել համալսարանի տեղեկատվական ներուժի համալրման գործընթացին, նպաստել դրանց մատչելիությանն ու արդյունավետ օգտագործմանը կրթական և հետազոտական կարիքների զարգացմանը համահունչ:
	Բաժնի խնդիրներն են.
1.	Համակարգել և բարելավել՝ 1) Ժամանակակից տեխնոլոգիաներով ապահովված կրթական գործունեություն 2) Ներդրված առցանց ուսուցման բազմագործառույթ էլեկտրոնային համակարգ 3) Էլեկտրոնային ուսուցման ժամանակակից պահանջներին համապատասխան ինտերակտիվ դասընթացներ 4) Կրթական ծրագրերի՝ ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով ապահովվածության աճ 5) Առցանց ուսուցման տեխնոլոգիաները կիրառող դասախոսների թիվ 6) Դասախոս - ուսանող գործունեության էլեկտրոնային ուսուցման լայն կիրառում:
2.	Մասնակցել՝ 1) փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի ձևավորմանը 2) համալսարանի կառավարման տեղեկատվական միասնականացված համակարգի, կրթական-տեղեկատվական էլեկտրոնային միջավայրի ձևավորմանը, 3) առցանց ուսուցման էլեկտրոնային պորտալի համակարգի ապահովմանը՝ Վեբ հենքով, 4) էլեկտրոնային ռեսուրսների օգտագործմամբ դասընթացների 100% հասվեկտոի ապահովմանը,, 5) էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառում 100% հիմնական դասախոսների կողմից:

2. Հաշվետու տարվա համար բաժնի պլանավորած աշխատանքները

ա/ ռազմավարական պլանի համաձայն

ՌԾ	Գործողություն	Ամիս	Տեղեկություն կատարման մասին
նպ.1,խնդիր 1.1	Ապահովել Google for Education կրթական համակարգի շարունակական գործածումը ՀՊՄՀ կրթական բոլոր ծրագրերի շրջանակներում:	Հունվար, սեպտեմբեր	2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի և 2021-2022 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի սկզբում ֆակուլտետների և ամբիոնների աշխատակիցներին տեղեկացվել է անհրաժեշտ գործողությունների կատարման և իրականացման քայլերը՝ ըստ ժամանակացույցի, հետևել ենք քլասրում էլեկտրոնային հաշվառում բոլոր դասընթացների էջերի

			ակտիվացմանը՝ ըստ դասաբաշխման, վերահսկել էջերում անհրաժեշտ նյութերի, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների տեղադրմանը, դասախոսների և ուսանողների ներգրավվածությանը համապատասխան դասընթացների էջերում: Ուսումնական գործընթացի առցանց տիրույթի գործունեությունը գնահատվել է մետադիտարկումների արդյունքների հիման վրա:
նպ.1, խնդիր 1.2	Օպտիմալացնել ուսումնական գործընթացի մասնակիցների գործառույթներն առցանց տիրույթում:	Սեպտեմբեր	Ցուրաքանչյուր ուսումնական տարվա մեկնարկից առաջ ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ աշխատանքների կատարման քայլերի քարտեզագրում, աշխատանքների տարանջատում և ժամանակի սահմանում՝ ըստ կազմված ուղեցույցի:
նպ.1, խնդիր 1.2	Ապահովել առցանց ուսումնական գործընթացին վերաբերող փաստաթղթերի հասանելիությունը ՀՊՄՀ շահակիցների շրջանում:	Հունվար, Սեպտեմբեր, հոկտմբեր,	Կատարվել է ուսումնական գործընթացի կազմակերպման փաստաթղթերի լրամշակում, հավաքագրում և տարածում ՀՊՄՀ շահակիցների շրջանում՝ aspu օգտատերերի էլեկտրոնային հասցեների, ինչպես նաև բաժնի կայքէջում համակարգված տեղեկատվության տեղադրման միջոցով:
նպ.1, խնդիր 1.3	Վերլուծել առցանց դասընթացների իրականացման հնարավորությունները:	Սեպտեմբեր, նոյեմբեր, հունվար	Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի կողմից վերլուծվել և համակարգվել են դասընթացների կազմակերպման հնարավորությունները: Պայմանավորված COVID-19 համավարակով, ԲՈՒՀ-ում ուսումնական գործընթացն իրականացվում է հիբրիդային տարբերակով՝ առցանց և առերես: Ուսումնական տարվա ընթացքում հիմք ընդունելով ԿԳՄՍՆ-ի կողմից ստացված հրամանները՝ ճշված ժամանակահատվածում, անհրաժեշտություն է առաջացել ուսումնական գործընթացը կազմակերպել միայն առցանց տարբերակով: Դասընթացների էջերում տեղադրվել են էլեկտրոնային մատյաններ:
նպ.1, խնդիր 1.3	Իրականացնել կրթական ծրագրի լիցենզավորման գործընթացը:	Սեպտեմբեր, հոկտեմբեր	Հաշվետու տարվա ընթացքում համալսարանի կողմից ԿԳՄՍՆ լիցենզավորման բաժին ներկայացվել է երկու կրթական ծրագիր. Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից «Կառավարման հոգեբանություն» առկա ուսուցմամբ մագիստրոսական կրթական նոր ծրագիր և Սկզբնական կրթության ֆակուլտետի կողմից «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» հեռակա ուսուցմամբ մագիստրոսական կրթական ծրագիր: Կրթական ծրագրերի փաթեթներն ըստ ներկայացված ձևաչափերի հավաքագրվել են և առձեռն ներկայացվել լիցենզավորման բաժին: Երկու մասնագիտություններն էլ լիցենզավորվել են:
նպ.2, խնդիր 2.1	Ստեղծել և թարմացնել կրթական էլեկտրոնային հարթակից օգտվելու ուղեցույցներ:	Սեպտեմբեր, ապրիլ	Ուսումնական տարվա սկզբում վերամշակվել են ուսումնական գործընթացի առցանց իրականացման ուղեցույցներ՝ class-երի, դասացուցակների ստեղծում, ամփոփիչ ավարտական քննությունների կազմակերպում, որոնք ուղարկվել են ՀՊՄՀ աշխատակիցներին էլեկտրոնային տարբերակով, ինչպես նաև տեղադրվել են բաժնի կայքէջում:

նպ.2, խնդիր 2.1	Իրականացնել առցանց ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման վերաբերյալ սեմինարներ:	Ապրիլ, սեպտեմբեր	Հաշվետու տարվա հունվար ամսից սկսած կրթության էլեկտրոնային կառավարման բաժինը պարբերաբար իրականացրել է առցանց հանդիպումներ՝ ֆակուլտետների և ամբիոնների պատասխանատուների հետ՝ էլեկտրոնային մատյանների կիրառման, ընթացիկ էլեկտրոնային գործընթացների խնդիրների և դրանց լուծման, ամփոփիչ ավարտական քննությունները կազմակերպելու հարցերի վերաբերյալ:
նպ.2, խնդիր 2.1	Պլանավորել առցանց ուսուցման զարգացման ռազմավարական գործողությունները:	Նոյեմբեր, դեկտեմբեր	Հաշվետու տարվա ընթացքում լրամշակվել է առցանց ուսուցման զարգացման ռազմավարական ծրագրի (2021-2025) գործողությունների պլանը:
նպ.2, խնդիր 2.2	Ապահովել ստորաբաժանումների հետադարձ կապը:	Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում	Ապահովվել է առցանց գործընթացի մասնակիցների և կրթության էլեկտրոնային կառավարման բաժնի շարունակական կապը՝ առերես, առցանց-google meet, էլեկտրոնային հասցե: Հաշվետու տարվա ընթացքում ստորաբաժանումների կատարած աշխատանքը համախմբել և կանոնակարգել առցանց ուսումնական գործընթացի պատասխանատուների տարեկան հաշվետվությունների հիման վրա:
նպ.2, խնդիր 2.2	Իրականացնել էլեկտրոնային դասընթացների մշտադիտարկում	Հունվար, հոկտեմբեր	Տարվա ընթացքում առնվազն 3 անգամ իրականացնել էլեկտրոնային դասընթացների էջերի մշտադիտարկում: Հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին ԿԷԿ բաժնի կողմից մշտադիտարկվել են էլեկտրոնային մատյանները և դասացուցակները:
նպ.2, խնդիր 2.2	Ապահովել տեղեկատվության փոխանցումը շահակիցների շրջանում	Շարունակական գործընթաց	Ուսումնական գործընթացի կազմակերպման տվյալների հասանելիություն, գործընթացի վերահսկողություն և տեղեկատվության գրանցում
նպ.2, խնդիր 2.3	Վերամշակել էլեկտրոնային դասընթացի կառուցվածքի օրինակելի ձևաչափ:		Մշտադիտարկումների և ներկայացված պահանջների հիման վրա 2022 թվականին նախատեսվում է կազմել էլեկտրոնային դասընթացի կառուցվածքի օրինակելի ձևաչափ և տարածել այն ՀՊՄՀ շահակիցների շրջանում:
նպ.2, խնդիր 4.2	Արդիականացնել էլեկտրոնային դասընթացների իրականացման մեթոդական ուղեցույցը և դասացուցակների ձևաչափը:	Սեպտեմբեր	Բարելավված էլեկտրոնային դասընթացների իրականացման մեթոդական ուղեցույց և դասացուցակների ձևաչափ:

3. Հաշվետու տարում բաժնի պլանավորած աշխատանքների կատարողականը ենթակառուցվածքի բարելավմանն ուղղված գործողությունները /բարձացրած հարցեր, համապատասխան կարգերի մշակումներ, գործառույթների բարեփոխում, մեթոդական երաշխավորությունների պատրաստում, ՀՊՄՀ գիտական խորհրդի, ռեկտորատի քննարկմանը առաջադրված հարցեր, հաշվետվություններ և այլն/

Աշխատանքի թվարկում
Բաժինը հաշվետու տարում. պարբերաբար • ապահովել է ASPU Google for Education համակարգի անխափան տեխնիկական աշխատանքը ՀՊՄՀ ներքին և արտաքին շահառուների համար, • համակարգել է կիսամյակում էլ. դասընթացների իրագործումը ASPU Google Classroom համակարգում առկա և հեռակա ուսուցման ձևերի համար,

- համակարգել է ASPU Google Meet առցանց տեսահանդիպումների հավելվածի արդյունավետ կիրառումը դասախոսների և ուսանողների ՀՊՄՀ յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում, ինչպես նաև ամբիոնների և ֆակուլտետների նիստերի առցանց կազմակերպման համար,
- իրականացրել է առցանց խորհրդատվական հանդիպումներ ՀՊՄՀ ֆակուլտետների և ամբիոնների աշխատակիցների հետ,
- տրամադրել է առցանց տեխնիկական օժանդակություն ՀՊՄՀ ուսումնաօժանդակ կազմի համար՝ ASPU Google for Education համակարգի վերաբերյալ,
- կազմակերպել է առցանց ռեկտորատներ և վարչական ստորաբաժանումների այլ առցանց հանդիպումներ aspu դոմենի շրջանակներում,

հունվար

- նախանշել է բաժնի տարեկան աշխատանքները՝ ՌԾ-ի կողմից Բաժնի առջև դրված նպատակներին, խնդիրներին և տարեկան գործողությունների պլանին համապատասխան;
- թարմացրել է ASPU Google Classroom համակարգի տեխնիկական բաղադրիչները՝ հաշվետու տարվա ուսումնական գործընթացի էլեկտրոնային տիրույթը ապահովելու նպատակով;
- համակարգել է հեռակա համակարգի բակալավրիատի և մագիստրատուրայի 1-2-3 կուրսերի էլ. դասընթացների ստեղծման գործընթացը;
- վերահսկել է ամբիոնների աշխատանքը՝ Class-երում ուսումնական էլ. նյութերի տեղադրման տեխնիկական գործառույթը;
- նախապատրաստել է ASPU Google Classroom համակարգը առկա ուսուցման ձևի էլ. դասընթացների ձևավորման համար;

փետրվար

- համակարգել է առկա ուսուցման ձևի բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերի էլ. դասընթացների ստեղծումը ASPU Google Classroom համակարգում
- համակարգել է համապատասխան ուսանողների և դասախոսների կցումը Class-երին և յուրաքանչյուր էլ. դասընթացում ուսումնական նյութերի տեղադրումը,

մարտ

- էլեկտրոնային մատյանների ձևաչափի վերանայում,
- ապահովել է ուսումնական գործընթացի շարունակականությունը՝ առցանց համակարգի գործածման միջոցով,
- ստեղծել է ուղեցույցներ դասախոսների և ուսանողների համար առցանց համակարգի հնարավորություններից գրագետ և արդյունավետ օգտվելու համար,
- համակարգել է առկա բակալավրիատի և առկա մագիստրատուրայի առցանց միջանկյալների իրականացման անխափան գործընթացը,

ապրիլ

- համակարգել է հեռակա բակալավրիատի և հեռակա մագիստրատուրայի առցանց միջանկյալների և կիսամյակային քննությունների իրականացման անխափան գործընթացը,
- նախապատրաստել է առկա համակարգի կիսամյակային քննությունների առցանց իրականացումը,
- ստեղծել է տեսական ուղեցույցներ և տեսաձայնագրություններ քննությունների անցկացման կարգի վերաբերյալ,
- համակարգել է հեռակա ուսուցման ձևի բակալավրիատի 4-5 կուրսերի ուսումնական գործունեությունը առցանց ASPU Google for Education տիրույթում,

մայիս

- նախապատրաստել է կանոնակարգ "Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի առցանց պաշտպանություններ"-ի անցկացման համար,
- իրականացրել է վերապատրաստումներ ամբիոնների և դեկանատների աշխատակիցների հետ՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի առցանց անցկացման վերաբերյալ՝ ըստ ուղեցույցների,
- համակարգել է առցանց կիսամյակային քննությունների իրականացումը,

հունիս

- ամբիոնների և ֆակուլտետների համար աուդիտի 2021 մեյլերի ստեղծում,
- համակարգել է առկա և հեռակա ավարտական պետական քննությունների իրականացումը ՀՊՄՀ բոլոր մասնագիտությունների համար,

հուլիս

- համակարգել է ֆակուլտետների գործառույթը ուսանողների ավարտական դիպլոմի տվյալների առցանց հավաքագրման հարցում և ճշգրիտ որակավորումների լրացման գործում,

օգոստոս

- ադմին պանելում ստեղծել է ուսանողների համար պանակներ և իրականացրել համապատասխան տեղափոխությունները
- իրականացրել է վերապատրաստում Արցախի պետական համալսարանում առցանց ASPU Google Education համակարգի վերաբերյալ,
- նախապատրաստել է առցանց ուսումնական համակարգը նոր ուսումնական տարվա և կիսամյակի համար
- Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի կողմից ներկայացվել է «Կառավարման հոգեբանություն» առկա մագիստրոսական ծրագիրը, որի ամբողջական փաթեթը՝ անհրաժեշտ փաստաթղթերով ԿԳՄՍ նախարարություն ներկայացնելու և լիցենզավորվելու համար վերստուգվել է ԿԷԿ բաժնի կողմից:

սեպտեմբեր

- համակարգել է դասախոսների և ուսանողների կցվածության ապահովումը էլ. դասընթացներին
- համակարգել է ամբոխների գործառույթը ուսումնամեթոդական փաթեթների հաստատման և դրանց տեղադրման վերաբերյալ համապատասխան Class-երում,
- ստեղծվել է 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի էլ. դասացուցակի համակարգ ՀՊՄՀ բոլոր մասնագիտությունների և բոլոր կրթական ձևերի համար,
- համակարգել է էլ. դասացուցակի լրացումը և գրագետ վարումը դեկանատների մասնագետների կողմից՝ հավաքագրելով ուսումնական գործընթացին վերաբերող ամբողջ գործընթացի ժամանակացույցը և նշումները մեկ ֆայլում՝ հասանելի դարձնելով այն ուսանողների համար;
- ՀՀ-ում կորոնավիրուսային իրավիճակով և Առողջապահության նախարարության հրամանով պայմանավորված, բաժնի մասնագետի կողմից համակարգվել է համալսարանում ՊՇՌ թեստավորման և պատվաստման գրանցամատյանների (յուրաքանչյուր ստորաբաժանման համար) ստեղծման, տվյալների հավաքագրման գործընթացը,
- Սկզբնական կրթության ֆակուլտետի կողմից ներկայացվել է «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» հեռակա մագիստրոսական ծրագիրը, որի ամբողջական փաթեթը՝ անհրաժեշտ փաստաթղթերով ԿԳՄՍ նախարարություն ներկայացնելու և լիցենզավորվելու համար վերստուգվել է ԿԷԿ բաժնի կողմից:

հոկտեմբեր

- բաժնի մասնագետի կողմից համակարգվել է համալսարանում ՊՇՌ թեստավորման տվյալների հավաքագրման և պատվաստումների սերտիֆիկատների ամբողջականացման գործընթացը: Ինչպես նաև իրականացվել է աշխատանք գրանցամատյանները լրացնելու վերաբերյալ և մոնիթորինգ՝ պարզելու, թե աշխատակիցներից քանիսն են թեստավորված, քանիսը՝ պատվաստված:
- իրականացրել է առցանց ուսումնական գործընթացի, էլեկտրոնային դասացուցակների մոնիթորինգ,

նոյեմբեր

- իրականացրել է էլեկտրոնային դասացուցակների և մատյանների մոնիթորինգ,
- համակարգել է հեռակա ուսուցման ձևի առցանց դասընթացների ստեղծման և մեկնարկման գործընթացը,
- ստեղծել և համակարգել է հեռակա ուսուցման համակարգի էլեկտրոնային դասացուցակների 1-ին կիսամյակի համակարգ,
- համակարգել է դեկանատների մասնագետների աշխատանքը,
- համակարգվել է համալսարանում ՊՇՌ թեստավորման գործընթացը:
- իրականացվել է աշխատանք գրանցամատյանները լրացնելու վերաբերյալ և մոնիթորինգ

դեկտեմբեր

- վերանայվել է ԿԷԿ բաժնի ռազմավարական ուղղությունը՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ զարգացման ռազմավարական ծրագրի (2021 - 2025 թթ.) գործողությունների կատարման պլանում: Վերաձևակերպվել և լրամշակվել են ռազմավարական ուղղության նպատակները ու խնդիրները, դրանց իրականացմանն ուղղված գործողությունները և կատարման ժամանակահատվածը,
- համակարգում և աջակցում ՀՊՄՀ բոլոր ստորաբաժանումներում, ՊՇՌ թեստավորման տվյալների հավաքագրման և պատվաստումների սերտիֆիկատների ամբողջականացման գործընթացի իրականացման համար,
- իրականացվել է մշտադիտարկում ՊՇՌ գրանցամատյանների գործընթացի կազմակերպման վերաբերյալ,
- համակարգել է ՀՊՄՀ ստորաբաժանումների 2020-2021թ. ամենամյա հաշվետվությունների առցանց հավաքագրումը:

Կատարման վերլուծություն
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանն արդեն 6 տարի է (2015 թ.-ից մինչ օրս), ինչ ավանդական կրթությունը համատեղում է էլեկտրոնային կրթության հետ՝ Google For Education համակարգի միջոցով: Այն մեզ հնարավորություն է տվել ապահովելու ուսանող-դասախոս կապը դասընթացների շրջանակներում բացի առերես և լսարանային հանդիպումներից, նաև համագործակցել Classroom էլեկտրոնային տիրույթում, որտեղ ամեն դասընթաց ունի իր էլեկտրոնային էջը, էլ. դասարաններին համապատասխանաբար կցված են ուսանողները, դասախոսները: Classroom հարթակում տեղադրվում են առարկայական նկարագրերն ու թեմատիկ տրոհումները, ընթացիկ ստուգման և քննական հարցաշարերը, դասախոսությունները,

գործնական և լաբորատոր աշխատանքները, ինչպես նաև հավելյալ և լրացուցիչ այլ նյութեր: Առցանց ուսուցման դեպքում 2020 թվականից մշակվել և գործարկվել է էլեկտրոնային մատյանների ձևաչափը, որոնք տեղադրվել են համապատասխան քլաս էջերում: ԿԷԿ բաժնի կողմից ստեղծվել են էլեկտրոնային դասացուցակների ձևաչափերը և տրամադրվել համապատասխան ֆակուլտետներին: Էլեկտրոնային դասացուցակները հնարավորություն են տալիս ֆակուլտետներին և ամբիոններին կատարել ուսումնական գործընթացում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն:

Հաշվետու տարում պայմանավորված COVID-19 համավարակով, ուսումնական գործընթացը կազմակերպվել է հիբրիդային եղանակով, ֆակուլտետները նախապես ներկայացրել են ուսումնական գործընթացի կազմակերպման իրենց առաջարկությունները: Առերես դասաժամերի ընթացքում դեկանատների աշխատակիցները և դասախոսները եղել են խիստ հետևողական հակահամաճարակային կանոնների պահպանմանը:

Առցանց դասաժամերն իրականացվել են Google Meet հավելվածի միջոցով, որը հնարավորություն է տալիս տեսաձայնագրել, ձեռք բարձրացնել, հաղորդագրություն գրել և կիսվել էկրանով:

Classroom հարթակում էլեկտրոնային դասերն անցկացնելուց զատ համապատասխան գործիքների միջոցով մեծ պատասխանատվությամբ և առանց խոչընդոտների իրականացրել ենք նաև միջանկյալ քննությունները, ամփոփիչ ստուգումները, պրակտիկաները, կուրսային աշխատանքների պաշտպանությունները, պետական որակավորման քննությունների նախապաշտպանությունները, պաշտպանությունները՝ նախօրոք դասախոսներին և ուսանողներին ուղեցույցներով վերապատրաստելուց հետո:

Հաշվետու տարում ԿԷԿ բաժինն ապահովել է արտաքին և ներքին տեղեկատվության հասանելիությունը ՀՊՄՀ շահակիցների շրջանում:

ԿԷԿ բաժնի կողմից պատշաճ մակարդակով կազմակերպվել են նաև 2020-2021 ուսումնական տարվա ամփոփիչ ավարտական քննությունները, որոնք ըստ ֆակուլտետների եղել են և՛ առերես, և՛առցանց տարբերակով: Երկու դեպքում էլ գնահատումն իրականացվել է Google classroom էլեկտրոնային հարթակի միջոցով:

Համավարակով պայմանավորված Առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակների և քաղաքաշտպանության ամբիոնը համագործակցելով ԿԷԿ բաժնի հետ կազմակերպել է բուհում ՊՇՌ հետազոտություն կազմակրպելու գործընթացը: Բաժնի մասնագետ Ա.Ափրիկյանի կողմից ստեղծվել են համապատասխան գրանցամատյանները և իրականացվել է մշտադիտարկում, արդյունքները վերանշյալ ամբիոնի կողմից ներկայացվել են ռեկտորատի նիստերում:

Ինքնագնահատում (SWOT-վերլուծություն)

ԿԷԿ բաժնի գործառույթների հիմնական մասը կազմում է ASPU Google Classroom էլ. ուսումնական հարթակի համակարգումը ՀՊՄՀ ուսումնական գործընթացի շրջանակներում, ուստի ներկայացնում ենք դրա կիրառման SWOT-վերլուծություն-ը.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
ստեղծված աշխատող էլեկտրանային ուսուցման համակարգ	ոչ լիարժեք արդյունք որոշ մասնագիտական ուղղություններում
6-ամյա փորձ՝ ուսուցումը էլեկտրոնային բաղադրիչներով իրականացնելու համար	կախվածություն արտաքին սերվերներից
ճկուն էլեկտրոնային հավելվածներ	էլեկտրոնային գրադարանի հայալեզու նյութերի բացակայություն
անընդհատ բարելավվող գործիքներ	
միասնական էլեկտրանային տվյալների համակարգման տիրույթ	
Հնարավորություններ	**Վտանգներ**
միասնական դաշտ և համագործակցություն այլ բուհերի Google for Education համակարգերի միջև	Google ընկերության գործունեության դադարեցում
հեռավար կրթական ծրագրերի իրականացման բազմաթիվ հնարավորություններ	հեղինակային ուսումնական էլեկտրոնային նյութերի արտահոսք
հեռավար վերապատրաստումներ իրականացնելու հնարավորություն	
ամփոփիչ ավարտական քննությունների կազմակերպման հնարավորություն	